

Ժան-Պիեր Մահե

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱԶՔԱՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿԱՎԱՅԻՆ ՍԱՆԴՈՒՂՔ

**Բանալի բառեր՝ խաչքար, սուրբ խաչ, սուրբ նշան, սանդուղք, տիեզերք,
Փիլիպոս առարյալ**

Խաչքարը միավորում է հայկական արվեստի երկու հիմնական հատկանիշները՝ քարը՝ որպես հայկական բնաշխարհի անքակտելի մաս, և խորհրդաբանությունը՝ որպես ազգային արվեստի ընկալման աղբյուր, որը գուսազ և ժուժկալ միջոցներով մշտապես կապված է սրբազն խորհուրդների հետ:

Ի տարբերություն այլարանության՝ խորհրդաբանությունը տանում է դեպի խորքային պրատումներ: Արվեստի ցանկացած ստեղծագործություն ձգտում է մարմին տալու որևէ գաղափարի և այն տեսանելի դարձնելու: Այդ ձգտումը, սակայն, երբեք ի կատար չի ածվում ամբողջապես: Վարպետների կողմից մշակված զարդաները նախ և առաջ նշանների հյուսվածքներ են կամ, Շարլ Բոնուերի խոսքով ասած, «սիմվոլների անտառ»: Նույնիսկ մեկ նրբագեղ գիծը կարող է իր մեջ ներառել աշխարհը, կյանքը, հավերժությունը:

Հայ արվեստի ուսկերդարյան շրջանի (VI-VII դդ.) խորիմաստ գաղափարները, IX դարից սկսած, ամբողջությամբ արտահայտվեցին խաչքարերում: Ինչպես հայտնի է, խաչքարի կենտրոնական տարրը խաչն է քրիստոնեության նվիրական նշանը: Սակայն խաչքարի վրա այն Քրիստոսի չարչարանքի գործիքը չէ, քանի որ չի կրում խաչվածի պատկերը¹ և ոչ էլ հարություն առած Քրիստոսի կողմից լրված դատարկ խաչը: Այլ նպատակ է դրված խաչքարի հորինվածքում:

Խաչքարի խաչը համբարձված Քրիստոսի փառքի գահն է (Հով. 8, 28; 12, 32): Խաչքարի խաչը նաև իր Երկրորդ Գալստյան լուսեղեն նշանն է (Մատթ. 24, 30): Վերջապես, խաչքարի խաչը Դրախտի գիտության և կենաց առասպելական ծառի պատկերն է: Նախատեղ Աղամը ուզեց ճաշակել այդ ծառի պտուղը, իսկ Երկրորդ Աղամը՝ Քրիստոսը, նոյն ծառի վրա ընծայվեց որպես Հոր գիտության պտուղը: Քանդակազարդ խաչքարերում այդ Կենաց Ծառի արմատները խարսխված չեն հողում, այլ ուղղված են դեպի երկինք: Նրանք կրում են պտուղներ՝ նուռ և խաղող, որոնք Սուրբ Պատարագի ընծան և անմահության դարմանն են:

Տարաբնույթ խորհրդաբանության նման համակցությունը չի կարող լինել մեկ իրական առարկա: Բուն իմաստով, խաչքարը ոչ խաչ է, ոչ ծառ է, ոչ գահ, ոչ չարչարանքի գործիք, ոչ աստղ, ոչ աստիք: Այն դրանց ամբողջությունն է և միասնական պատկերը: Խաչի կենտրոնում պատկերված զարդը կոչվում է «ակն»: Գրաբարով այդ բառը նշանակում է **աչք**, նաև՝ **թանկարժեք քար**, նաև՝ **աղբյուր**:

Խաչքարի վրա այդ լուսավոր աղբյուրից ցայտում են Սուրբ Նշանի ճառագայթները, որոնք միաժամանակ Կենաց Ծառի ճյուղերն են: Այդ իսկ

¹ Բացառություն են կազմում մի քանի «Ամենափրկիչ» կոչվող խաչքարերը:

Հայկական խաչքարը որպես երկնային սանդուղք

պատճառով քանդակագարդ խաչի ծայրերին պատկերվում են զարդանախշեր, որոնք կարող են մեկնաբանվել թե՝ որպես կրակի լեզուներ, թե՝ որպես բողոքներ և թե՝ որպես թանկագին քարեր: Այսպիսով, խաչքարը ոչ թե պատկեր է, այլ գաղափարանիշ (idéogramme), ոչ թե դեկորատիվ զարդանկար, այլ հոգևոր խորհուրդները վերծանելու կանչ:

Որոշ հնագույն աղբյուրների² համաձայն՝ առաջին մարդուն ստեղծելու համար Արարիչ Աստվածն աշխարհի կենտրոնում՝ Գողգոթայի վրա, հոդ է վերցրել խաչած շարժումով՝ միավորելով աշխարհի բներները (արևելք-արևմուտք, հյուսիս-հարավ): Իր ձեռքում հայտնված այդ հոդից է նա ստեղծել Աղամին, որի անվան չորս տարերը համապատասխանում են աշխարհի չորս կողմերի անուններին (Anatole, Dysis, Arctos, Mesembrion). ուրեմն Խաչն այն գործիքն է, որով Ամենակալ Աստվածը կառավարում է ողջ տիեզերքը, այսինքն՝ մահու և հարության, անցողիկության և վերածննդի պատճառ հանդիսացող չորս տարերը՝ հոդը, կրակը, ջուրը և օդը: Հետևաբար խաչքարը պատմում է ավելին, քան այն, ինչ երևում է առաջին հայացքից: Այն ոչ միայն Խաչը, այլև տիեզերքն է ներկայացնում: Խաչքարի ընկալումը թերի է, եթե այն չի դիտարկվում տիեզերական չափանիշների լույսի ներքո:

Սուրբ Նշանի կենտրոնական թեմային հավատարիմ մնալով հանդերձ՝ խաչքարերը IX դարից մինչ այսօր կրել են զանազան ձևական, ոճային և դեկորատիվ փոփոխություններ:

Սկզբնական շրջանում խաչքարերի սալաքարը պայտած էր³: X-XI դարերում այն դառնում է քառանկյուն, որն այնուհետև ձեռք է բերում ավելի նեղ և սլացիկ ուրվագիծ: XIII դարից ի վեր խաչքարի վերին՝ քիվային մասը, թեթևակի կորություն է ստանում դեպի ներս: Մյուս կողմից, խաչքարի հարդարանքում երևան են զալիս ֆիգուրատիվ պատկերներ. խաչի տակ՝ Աղամի գանգը, իսկ հորինվածքի գագաթին՝ Չորեքկերպյան աթոռը: Վերջինս ներկայացնում է Քրիստոսին Երկրորդ Գալստյան փառքի գահին բազմած, շրջապատված ապոկալիպտիկ էակներով (առյուծ, ցուլ, արծիվ և մարդ) և հրեշտակներով:

Այդ նույն ժամանակաշրջանում խաչքարի վրա սկսում են պատկերել հանգույցալին, որի հիշատակին այն կանգնեցված է: Երբեմն նա քանդակված է ձիավորի տեսքով խաչքարի ստորին մասում՝ վարդյակի տեղում:

XIII և XIV դարերում, Չորեքկերպյան աթոռին առընթեր, հայտնվում է Բարեխոտության տեսարանը. Տիրամայրը և Հովհաննես Մկրտիչը բարեխուսում են մարդկության համար:

Նշված առանձնահատկությունները կարելի է տեսնել 1233 թվականին

² Օրինակ տե՛ս J.-P. Mahé, *La Caverne des trésors, version géorgienne*, II, 7-11, էջ 4, և Առաջաբանը, էջ XIV-XV.

³ Հ. Պետրոսյան, *Խաչքար. Ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը*, Երևան, 2008:

Գրիգոր Խաղբակյանի կողմից պատվիրված խաչքարի վրա (գտնվում է Էջմիածնի վեհարանում) (նկ. 1, 2, 3): Հետազայում այդ պատկերները հաճախադեպ են Զուրայի՝ XVI դարի խաչքարերի վրա:

Հասկանալի է, որ հանգույցալը հանձնում է իր հոգին Խաչի գորությանը, որպեսզի մահվան խափարից անցնի դեպի հարության լուսը և գերեզմանի արևմուտքից դեպի հավիտենական կյանքի արևելքը: Որքա՞ն է հեռավորությունը այս երկու հակադիր կետերի միջև: Պատասխանն է՝ տիեզերքի ամբողջությունը: Յուրաքանչյուր խաչքարի ուղղահայաց եզրագծերի հարդարանքը՝ նվիրված երկնային մարմիններին՝ աստղերին, համաստեղություններին, պատմում է այդ տիեզերքի մասին: Չմոռանանք, որ Cosmos-ը հայերեն կոչվում է «տիեզերք», այսինքն՝ «մեծ», «անհուն» աշխարհներ կամ, ավելի ճիշտ, «եզերներ»: Հետևաբար խաչքարի եզրագծերը և վերին մասում նրանց կապող կամարը հուշում են տիեզերքի անհուն տարածությունը:

Փիլիպոս առաքյալի պարականոն վկայաբանության մեջ հեթանոսների կողմից հետապնդվող առաքյալը խնդրում է Քրիստոսից «...իշխանել հուր և այրել զանաստուածս քաղաքի այտրիկ, զմարդիկ զապստամբս յԱստուծոյ, զի կորիցեն ամենեքեան որք գործեն զանօրէնութիւնս»⁴: Առաքյալը նույն աղոթքը կրկնում է մի քանի անգամ, և հանկարծակի երկրաշարժ է տեղի ունենում. «Եւ անդէն վաղվաղակի լիներ շարժումն սաստիկ յոյժ, և պատառեցաւ երկիր և եկու զիժն և զբուրմսն և զիշխանն և զամբոխն անաստուածից»⁵: Փրկվում են միայն նորընծա քրիստոնյաները: Այդ ժամանակ Փիլիպոսին հայտնվում է Քրիստոսը և կշտամբում նրան Ավետարանի պատվիրանները մոռանալու համար: Քրիստոսը, ձեռքը պարզելով, խաչի նշանով փրկում է մարդկանց մահից. «... և ձգեաց զձեռն իւր ի վերայ այնոցիկ որք ընկրմեցան ի խորան, և նշմարեցաւ խաչ մի լուսաւոր ի վերայ տեղույն այնորիկ, և ամենայն բազմութիւն մարդկանն ի վեր գային ի խորոցն, բայց միայն իշխանն և իժն և քուրմըն զոր պաշտէին, և Տէր աներևոյթ լիներ»⁶:

Փիլիպոսի այս տեսիլքը ամփոփում է խաչքարերի խորհրդաբանական նշանակությունը: Մեջբերված հատվածում երկիրը բացվեց, և մարդիկ գահավիժեցին դժոխք: Բայց Քրիստոսի ձեռքով հայտնված լուսավոր Խաչը սանդուղք հանդիսացավ կյանքին վերադառնալու համար:

Նույն կերպ քարի վրա քանտակված Խաչը տիեզերական չափանիշ ունեցող լուսավոր նշան է: Այն սփովում է ամբողջ մարդկության՝ ողջերի և մեղալների վրա՝ ծածկելով այն ողջ անհուն տարածությունը, որն ընկած է դժոխքի խորքերից մինչև երկնքի բարձունքներում գտնվող Աստծո փառքի աթոռը:

⁴ «Վկայաբանութիւն սուրբ առաքելոյն Փիլիպոսի», Թանգարան հայկական Հին եւ Նոր դպրութեանց, հ. Գ, Անկանոն զիրք առաքելականք, Վենետիկ, 1904, էջ 305:

⁵ Նույն տեղում, էջ 311:

⁶ Նույն տեղում, էջ 314:

Жан-Пьер Маэ

АРМЯНСКИЙ ХАЧКАР (КРЕСТ-КАМЕНЬ) КАК НЕБЕСНАЯ ЛЕСТНИЦА

Резюме

Ключевые слова: хачкар, святой крест, святое знамение, лестница, Вселенная, апостол Филипп

В армянском переводе апокрифического Мартииologа апостола Филиппа Христос, спустившись в ад, предоставляет возможность толпе язычников снова вознести к жизни, используя в качестве лестницы нарисованный им над бездной большой, светозарный крест. С 12-13 вв. на армянских хачкарах изображается эта спасительная роль креста. Края хачкаров, украшенных звездами, символизируют высоту Вселенной. Внизу усопший предстает в образе всадника. Вверху Христос восседает на четырехугольном троне, а крест становится знанием грядущего вознесения новопреставленного.

Jean-Pierre Mahé

LE KHACHKAR ARMÉNIEN: ÉCHELLE DRESSÉE VERS LE CIEL

Résumé

Mots-clés: Khachkar; Sainte Croix; Saint Signe; échelle; étoile; cosmos; apôtre Philippe

Dans la version arménienne du Martyre apocryphe de l'Apôtre Philippe, le Christ permet à une foule de païens engloutis en enfer de remonter vers la vie en utilisant comme échelle la grande croix lumineuse qu'il vient de tracer sur l'abîme infernal.

Les khachkars arméniens, spécialement à partir des XII^e-XIII^e siècles, illustrent explicitement cette fonction rédemptrice de la Croix. Leur bordure étoilée symbolise la hauteur de l'univers. En bas, apparaît le défunt sous la forme d'un cavalier. En haut, le Christ siège sur le trône tétramorphe, et la croix intercède pour la remontée du défunt.



Նկ. 1. 1233 թ., Գրիգոր Խաղբակյանի խաչքարը,
Էջմիածնի վեհարան:



Նկ. 2. Չորեքկերպյան Արթո, 1233 թ. Գրիգոր Խաղբակյանի խաչքար,
Էջմիածնի վեհարան:



Նկ. 3. Զիավոր, 1233 թ. Գրիգոր Խաղբակյանի իսաքար,
Էջմիածնի վեհարան: